ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«20» «հուլիսի» 2021 թ. № 265-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 273-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորող հանձնաժողով ստեղծելու, լիցենզավորող հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 273-Լ հրամանի Հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Տ. Սիմոնյան- շրջակա միջավայրի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)» և «Տ. Գասպարյան- ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ» բառերը հանել,
2) «Ա. Ալեքսանդրյան- շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետ» բառերը փոխարինել «Ա. Սայադյան- շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետի պարտականությունները կատարող» բառերով,
3) «Գ. Գևորգյան- շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն» բառերը փոխարինել «Խ. Մարտիրոսյան- շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող» բառերով:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

7/20/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«20» 07 2021թ.
ք. Երևան